կանայք և երիտասարդք: Կամուրջի միւս կողմը Երասխի միւս ափին մօտիկ՝ Ալիջան գիւղի հասարակութիւնը Թափորով դուրս էր եկել ընդառաջ և աղ ու հաց մատոյց Վեհին: Այստեղ Հոգևոր Տէրը կանչեց իւր ուղեկից միաբան անդամներին, օրհնեց և հրամայեց յետ դառնալ, իսկ Տ. Տ. Գարեգին Սաթունեան և Մատթէոս վարդապետներին իւր հետ վերցնելով մեկնեցաւ Իգդիր:

*
* *

Լուսաւորչի մուտն ի Վիրապն տօնին Մայր Աթոռ ուխտ էին եկել Երևանի թեմական դպրոցի տեսուչը և երկու ուսուցիչներ բարձր դասարանների աշակերտներից 40 հոգուց բաղկացած մի խմբի հետ: Մի գիշեր Մայր Աթոռում հիւր մնալով, թանգարանները, մատենադարանը, ճեմարանը այցելելով յետոյ կրկին վերադարձան Երևան:

*
* *

Նոյն տօնին ճեմարանի երաժշտութեան ուսուցիչ Հ. Կոմիտաս վարդապետը երաժշտական մի երեկոյթ տուեց, որին հրաւիրուած էին Մայր Աթոռի միաբանութեան հետ նաև թեմական դպրանոցի տեսուչն և ուսուցիչներն իրենց աշակերտներով: Ծրագիրը հարուստ էր և բազմազան՝ հոգևոր և ժողովրդական երգեր, դասախօսութիւններ երաժշտութեան պատմութիւնից, գաւեշտական զեկեցիկ արտասանութիւններ: Շատ հետաքրքրական էր մանաւանդ Հ. Կոմիտասի դասախօսութիւնը, որով ապացուցանում էր, թէ Հայոց եկեղեցական եղանակները ժողովրդական են՝ շարականները համեմատելով ժողովրդական երգերի հետ: Բոլոր ներկայ եղած հանդիսականները երաժշտական ճշմարիտ վայելք ստացան երեկոյթից և ամենայն սրտով և ոգևորութեամբ լի թոքին գոչեցին: Հ. Կոմիտասը, կարող ենք վստահութեամբ ասել, մեծ ապագայ ունի Հայոց երաժշտութեան պատմութեան մէջ, ցանկանք, որ նա իւր բարի ձգտումներն իրագործել կարողանայ:

# ՃԵՄԱՐԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ

## ՄԱՅՐ ԱԹՈՌԻ ՃԵՄԱՐԱՆԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԵՒ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԸ 1899—1900 ուս. շրջանում.

### ՀԱՄԱՌՕՏ ՏԵՂԵԿԱԳԻՐ.

Այս շրջանում ճեմարանը բոլորում էր իւր գոյութեան քսանևհինգամեակը, որ և տօնուեցաւ համեստ ընտանեկան հանդէսով 1899 սեպտեմբեր 25-ին: Նոր դարաշրջանի մի յայտարար նշանը կարելի էր համարել այն հանգամանքը, որ նախկին հասակաւոր ուսուցիչներից մի վերջին պատկառելի ներկայացուցիչ էր մնացել միայն տարուայ սկզբին և նա տարուայ միջոցին խաղաղ հեռացաւ ուսուցչական ասպարէզից ու ճեմարանի վարչական—կրթական գործը ամբողջապէս մնաց նոր երիտասարդ սերունդի՝ ըստ մեծի մասին նոյն հաստատութեան սաներից բաղկացած խմբի ձեռքում: Մի ուրիշ նորութիւն դպրոցական ներքին կեանքի մէջ այն էր, որ վարժոցի փոխարէն վերաբացուեցան 1886 թ.-ից ի վեր փակուած Ա. և Բ. դասարանները և ճեմարանն ունեցաւ կրկին լիակատար դպրանոցական դասընթացք:

Այս շրջանում ճեմարանի գիշերօթիկ սաների թիւը ամենամեծն էր իւր գոյութեան օրից. նա ունէր 226 գիշերօթիկ և 29 երթևեկ՝ ընդամէնը 256 աշակերտ †: Դոցանից միայն 27 հոգու համար դրամական նպաստ է վճարուել բա-

† Աւելորդ չենք համարում համեմատութեան համար դնել նախընթաց չորս տարիների գիշերօթիկ սաների թիւը՝ 130—136—198—210, որ ուրեմն այդ տարիների ընթացքում բարձրացել է զգալի կերպով: $18^{96}/_{97}$ թ.-ին մի անգամից շատ սաներ աւելանալու պատճառն այն էր, որ տարուայ միջոցին ճեմարան ընդունուեցան ս. Գայանէի վանքում պատսպարուած որբերը:

րերարների կամ ծնողաց կողմից. Մնացած 200 հոգու պահպանութեան ամբողջ հոգսը†, ծանրացել է Մ. Աթոռի վերայ։ Նոր ընտրուել են այս թուականին 2 որդեգիրներ ի յիշատակ հանգուցեալ Ս. Բուդաղեանի և մի որդեգիր ի յիշատակ Ճահգխտանեանի։ Հին որդեգիրները հինգ էին՝ 2 պ. Ա. Ծատուրեանի և մի մի հանգուցեալ Իգմիրեանցի, պ. Ի. Ժամհարեանցի և Տ. Աթամալեանի հաշւով։ Մշտական որդեգիրներ կային նոյպէս 5 հոգի՝ 2 հանգ. բժ. Գ. Տիգրանեանի††։ Մի մի Հանգ. Գ. Լալայեանի, Թումայեան ամուսնոց և Տ. Ճ. Մելիքեանի անունով, որոնց վերայ աւելացաւ նաև մի որդեգիր Ժամհարեան եղբարց ձեմարանի քառասնհինգերորդ տարեդարձի առթիւ նուիրած գումարի հաշւին։ Արժ. Ղազարոս քահանայ Յովսէփեան ես ուղարկել էր մի որդեգիր, որի թոշակը խոստացել էր հոգալ տարեկան Սիմֆերոպոլի ազգայնոց նուէրներով, բայց այդ բարի ազգայնոց կողմից կէս տարուայ թոշակ միայն ստացուեցաւ։

Թեմերի համեմատ աշակերտներն այսպէս էին բաժանւում.

| | |
|---|---|
| Երևանի թեմից* . . . | 129 |
| Տաճկահայքից . . . . | 60 |
| Պարսկահայքից . . . . | 12 |
| Վրաստանի և Իմերէթի թեմից | 25 |
| Արցախու թեմից . . . . | 21 |
| Բեսարաբիայ և Ն. Նախիջևանի | 6 |
| Շամախւոյ թեմից . . . | 2 |
| Աստրախանի թեմից . . . | 1 |
| | 256 |

Դասարանների համեմատ բաժանման և փոխադրութեան պատկերը կարելի է տեսնել հետևեալ տախտակից.

| Դասարաններ եւ լսարաններ | Ընդհանուր թիւ | Գիշերօթիկ | Երթեւեկ | Փոխւեցին | Մնացին | Արձակւեցան | Ելան | Աւարտեցին | Առ 1-ն սեպտ. 900 թ. մնացել են |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Ա. զ. | 47 | 32 | 15 | 41 | » | 6 | » | » | 41 |
| Ա. հ. | 49 | 39 | 10 | 31 | 3 | 15 | » | » | 34 |
| Բ. | 29 | 27 | 2 | 23 | 2 | 3 | 1 | » | 25 |
| Գ. | 25 | 24 | 1 | 20 | 3 | » | 2 | » | 23 |
| Դ. | 27 | 26 | 1 | 24 | 2 | » | 1 | » | 26 |
| Ե. | 19 | 19 | » | 18 | 1 | » | » | » | 19 |
| Զ. | 24 | 23 | 1 | 21 | 3 | » | 7 | » | 17 |
| Ա. լս. | 14 | 14 | » | 13 | » | » | 1 | » | 13 |
| Բ. | 14 | 14 | » | 12 | » | » | 2 | » | 12 |
| Գ. | 8 | 8 | » | » | » | » | » | 8 | » |
| Գում. | 256 | 226 | 30 | 203 | 14 | 24 | 14 | 9 | 210 |

Ըստ այսմ բացի 3 լսարաններից և դպրանոցական 6 դասարաններից ճեմարանն ունէր Ա. դասարանի համար նաև զուգընթաց, որ միջոց է տալիս համեմատաբար աւելի լաւ պատրաստուած և ընտիր աշակերտներից Ա. հիմնական կազմելու և գրեթէ մի ամբողջ տարուայ դասընթացով բարձր պահելու թեմ. դպրանոցների համապատասխան դասարանից։

Ուշադրութեան արժանի մի հանգամանք ևս այստեղ մասնագիտական բաժնի ուսանողների թիւն է, որ տարեցտարի աւելացել է, հակառակ շատ մեծ խոչընդոտների, և որ առանձին կարևորութիւն ունի ճեմարանը իւր նպատակին հասցնելու նկատմամբ։

Ուսման լիակատար ընթացքն աւարտած 8 հոգուց մին՝ Երուանդ Տ. Մինասեան, միաբան ընդունուեցաւ և սարկաւագ ձեռնադրուեցաւ, 5 հոգի ուրար են ընդունել քահանայութեան պատրաստուելու համար։ Նշանակելի է նաև այս կէտը, որ վերջին տարիների ճեմարանաւարտները մեծ ձգտում են ցոյց տալիս քահ. կոչումն ընդունելու՝ ըստ մեծի մասին իրենց ծննդավայրերում, գիւղերում, և դժբաղդաբար քաջալերութիւն չեն գտնում դուրսը, յաճախ նոյն իսկ ծանր արգելքների են հանդիպում։

† Չնայելով նախկին այն նուէրները, որոնք ստացւել են նախորդ հայրապետների ժամանակ մշակւած որդեգիրների համար եւ որոնց հաշւին նորանոր որդեգիրներ ընդունելու սովորութիւնը չի պահւել դժբաղդաբար:

†† Իսկապէս Տիգ.-ի որդեգիրներ 3 պէտք է լինէին, որոնց ընդունութիւնը վերապահւած է Ն. Նախիջեւանի Աղքատախնամ ընկերութեան. երրորդն այս տարի ընդունւած ուղարկւած է:

* Այս թւից են սովորաբար բոլոր երթեւեկները:

Հրաժարած ուսուցիչների փոխարէն նոր հրաւիրուեցան.

Արժ. Կոմիտաս վարդապետ, Եկեղ. երաժշտութեան համար, որ երաժշտ. բարձր կրթութիւն ստացել է Բերլինում.

Պ. Ս. Տիգրանեան, Եկեղ. իրաւագիտութեան և Ռ. գրականութեան համար, որ աւարտել է Ս. Պետերբուրգի Կայսեր. համալսարանի իրաւաբանական բաժինը.

Պ. Յ. Բախչեան, Ռ. լեզուի համար, որ աւարտել է նոյն համալսարանի Արևել. բաժինը.

Պ. Յ. Յովհաննիսեանի դասերը, երբ նա Ուսումն. տարին սկսելուց առաջ անակնկալ կերպով հրաժարուեցաւ, բաժանուեցան նախ նոր ուսուցիչների մէջ և ապա յունուար ամսից յունարէնի համար ուսուցիչ հրաւիրուեցաւ պ. Յ. Մանանդեան, որ լեզուագիտութեամբ պարապելով փիլ. դոկտորի աստիճան է ստացել Գերմանիայում (Իենայի համալսարանում) և աւարտման վկայական Ս. Պետերբուրգի համալսարանի Արևել. բաժնից.

Նկարչութեան ուսուցիչ եղաւ պ. Դ. Նահապետեան.

Ճեմարանի նախկին սաներից ուսուցչութեան հրաւիրուեցան Շնորհ. Գրիգոր սարկաւագ և ուրարակիր Յ. Արիստակէսեան։ Վերջինս Նորին Վեհափառութեան հրամանով նոյեմբեր ամսին Երևանի Թեմ. դպրանոց փոխադրուեցաւ։

Դասերն սկսուել են սեպտ. 7-ին և դադարել մայիս 13-ին. Հարցաքննութիւնները ապրիլ 18-ին և վերջացել մայիս 31-ին.

Տարուայ ընթացքում պարապած բոլոր դասերի գումարն է՝ Ա. զուգընթաց դասարանի դասերը չհաշուելով . . . 5964.

Հիւանդութեան և այլ պատճառներով ուսուցիչները բացակայել են ընդամէնը . . . . . . . . 185 դ.
Որոնց փոխարէն աւելորդ պարապել են 121 »
Բաց թողել են ուրեմն միայն . 64 »
(կրկին Ա. զուգընթաց դասարանը չհաշուած).

Պակաս և աւելի պարապած դասերի ցուցակը հետևեալն է.

| | ԱՆՈՒԱՆՔ ՈՒՍՈՒՑՉԱՑ | Գումար պակաս պարապածների | Գումար աւելի պարապածների |
|---|---|---|---|
| 1 | Տ. Կարապետ վարդապետ . | — | 44 |
| 2 | Տ. Գարեգին վարդ. . . | 49 | 1 |
| 3 | Տ. Կոմիտաս վարդ. . . | 15 | 2 |
| 4 | Շնորհ. Եսայի սարկ. . . | 9 | 8 |
| 5 | Շնորհ. Գրիգոր սարկ. . . | 9 | — |
| 6 | Պ. Կանայեան Ստեփան . | 26 | 2 |
| 7 | Պ. Աբեղեան Մանուկ . . | 1 | 4 |
| 8 | Պ. Յարութիւնեան Սէթ . | 17 | 4 |
| 9 | Պ. Բաղչեան Յովհաննէս . | 6 | 4 |
| 10 | Պ. Տիգրանեանց Պետրոս . | — | 4 |
| 11 | Պ. Թումանեանց Դալուստ. | 11 | 4 |
| 12 | Պ. Հախնազարեանց Մարտ. | — | 16 |
| 13 | Պ. Տիգրանեան Սիրական . | 15 | — |
| 14 | Պ. Միրաքեան Քերովբէ . | 16 | — |
| 15 | Պ. Յովհաննիսեան Յովհաննէս | — | 14 |
| 16 | Պ. Ղազարեան Գէորգ . . | 11 | 14 |
| | Գումար | 185 | 121 |

Ուսումն. Խորհուրդը գումարուել է 17 անգամ և բացի ընթացիկ և ընդհանուր յառաջադիմութեան վերաբերեալ խնդիրներից զբաղուել է ի միջի այլոց դաստիարակութեան կանոններ մշակելով, որոնք Վեհափառ Հայրապետի վաւերացմամբ գործադրութեան մէջ են մտել ներկայ թուականին։ Այլև վաղուց զգացուած մի պահանջ սկսել է իրականանալ. Ուսումն. Խորհրդի քննութեան ներկայացուել են բարեյիշատակ Բժ. Տիգրանեանի կտակի համաձայն երկու կարևոր աշխատութիւններ՝ Հայոց արմատական բառերի բառարան պ. Հ. Աճառեանի. և Ընդհ. պատմութեան դասագիրք պ. Ստ. Կանայեանի կազմած։ Ուսուցիչներից ոմանք լուրջ գրական աշխատութիւններ են հրատարակել Արարատի էջերում, կամ գիտական ուսումնասիրութիւնների ձեռնարկել Մ. Աթոռի մատենադարանում։

Բացի սովորական ազգ. եկեղեցական

տօներից և ԻԵ-ամեայ տարեդարձի հանդի-սից՝ տեղի են ունեցել երկու արտաքոյ կարգի կարևոր հանդէսներ.

ա) Ի պատիւ Վեհափառ Հայրապետի ծննդեան 80-րդ տարեդարձի.

բ) Ի պատիւ պ. Ս. Մանդինեանի ԻԵ-ամեայ գործունէութեան.

Կազմուած են եղել նաև 5 գրական երեկոյթներ՝ պատմութեան, կրօնական առարկաների, ռուսաց լեզուի և գրականութեան, գերմաներէնի և բնագիտական առարկաների ուսուցչաց ղեկավարութեամբ, իւրաքանչիւրին իւր առարկայից ընտրած նիւթով.

Մատենադարանը ճոխացաւ քանի-հինգամեակի առթիւ եղած և այլ առատ նուիրաբերութիւններով.

Հանգուցեալ Դր. Ջանշեան՝ երկու նուագում ուղարկել է.

Հայերէն—30. ռուսերէն—309, օտար լեզուներով—104 ընտիր գրքեր, եւրոպական թանգարաններում պահուած նկարչութեան և քանդակագործութեան հրաշակերտից լուսանկարների մի հարուստ ժողովածու. Братская помощь - գրքի հրատարակութիւնից մնացած բազմաթիւ թանկագին մնոգրամներ և նկարներ.

Պ. Կ. Եղեան՝ ռուսերէն 99 և օտար լեզուներով 5 ընտիր գրքեր. այլև 50 օր. իւր հրատարակած «Կորիւն վարդապետ և նորին թարգմանութիւնք», ի հաշիւ պ. Ա. Տատուրեանի գնած Բրիտանական հռչակաւոր հանրագիտական բառարանի 25 հատորները։

Պ. Լ. Մսերեան իւր պապ՝ յիշատակաց արժանի Մսեր Մագիստրոսից ժառանգութիւն մնացած 102 հ. ռուսերէն, ըստ մեծի մասին աստուածաբանական գրքեր.

Մուրացան՝ հայերէն 117, ռուսերէն 9, օտար լեզ. 6.

Տէր. Մեսրոպ արքեպիսկոպոս հայերէն 52 և մի քանի ձեռագիրներ.

Տէր. Մակար եպիսկոպոս 100 օր. իւր գրուածներից.

Թիֆլիսի Հրատ. Ընկերութիւնը 56 հ. իւր հրատարակութիւններից.

Մոսկուայի Լազարեան ճեմարանը հայ. 10, ռուս. 12, օտար լեզ. 7.

Իշխան Կ. Բեհբութեան հայ. 1, ռուսերէն 32 ընտիր գրքեր.

Պ. Կ. Կոստանեան հայ. 64, ռուս. 20, օտար լեզ. 10.

Ս. Պետերբուրգում ուսանող ճեմարանի նախկին սաները մի քանի արժէքաւոր գրքեր և Կովկասի ուսուցիկ քարտէզը. ևլն.

Ընդամէնը նուէր ստացուել և գնուել է հայերէն 559, ռուսերէն 668 և օտար լեզ. 156 նոր գիրք։

Ըստ այսմ յաջորդ ուսումն. շրջանի սկզբին հիմն. մատենադարանում եղել է.

| | |
|---|---|
| Հայերէն . . . . | 1960 |
| Ռուսերէն . . . . | 3705 |
| Ֆրանսերէն . . . . | 1546 |
| Գերմաներէն . . . . | 707 |
| Այլ լեզուներով . . . | 311 |
| Թերթ և բառարան . . | 1550 |
| Մեծագին պատկերազարդ հրատ. | 42 |
| Համարի ներքոյ դեռ չմտած . | 560 |
| Ընդամէնը | 10,381 գիրք |

Աշակերտական մատենադարանում եղել են

| | |
|---|---|
| Հայերէն . . . | 1334 |
| Ռուսերէն . . . | 659 |
| Ընդամէնը | 1993 գիրք. |

Բոլոր գրքերը միասին 12,374

Դասագիրք . . . 5954 հ.

Մատենադարանապետ էր պ. Հ. Աճառեան։

---

Տեսչի օգնական կարգուեցաւ յունուար ամսից պ. Յ. Յովհաննիսեան։ Նոր վերակացու հրաւիրուած էր ճեմարանի նախկին սան պ. Ք. Միրաքեան։ Վերակացութեան պաշտօն վարում էին բացի նորանից պ. պ. Մ. Հախնազարեան և Դ. Ղազարեան։

Աշակերտների առողջապահութեան վերայ հսկում էր ըստ առաջնոյն Բժիշկ պ. Կ. Խաչատրեան, որի հմտութեան և աչալրջութեան շնորհիւ բոլոր հիւանդները յաջողութեամբ բժշկուեցան։ Նորա պաշտօնավարութեան վեցերորդ տարին էր այս, որ Տիրոջ ողորմութեամբ ոչ մի մահուան դէպք տեղի չունեցաւ ճեմարանի յարկի ներքոյ։

Տարուայ ընթացքում հիւանդանոց մտել էին ընդամէնը՝ 285 աշ.

Դպրոցից տեղ. են ունեցել . 147
«Խորուկ» կոչուած բկացաւ . 40
սովորական բկացաւ . . 26
աչքացաւ . . . . 12
արեան նուազութիւն . . 9
ուրիշ այլ և այլ հիւանդութիւններ 42

Այս թւում 2 հոգի միայն լուրջ հիւանդ են եղել՝ թոքերի բորբոքումով բռնուած։

Առողջական համեմատաբար այսպիսի բարւոք դրութիւնը, չնայած սաների աւելի բազմանալուն՝ կարելի է դուցէ մասամբ նաև նորանով բացատրել, որ աշակերտաց ճաշի սեղանը նոյեմբեր ամսից Վեհափառ Հայրապետի Ճեմարանի բակում կառուցած նոր սեղանատունը փոխադրուեցաւ, և վարչութիւնն անմիջական հսկողութիւն ունենալով կարող էր սննդեան բարելաւելուն նպաստել, որից շատ բան կախուած է։

Տնտես էր Շնորհ. Եսայի սարկաւագ։

Ծախք եղել է ամբողջ 1899 թ.-ի ընթացքում . . . . 41,777 ր.

Իսկ 1900 թուականի համար նախահաշիւ էր կազմած 40,832 ռուբլու. բայց այդ գումարը մի քանի խոշոր արտաքոյ կարգի և չնախատեսուած ծախքերի պատճառաւ չբաւականացաւ և հարկ եղաւ խնդրել այլեւ . . . . . 3000 ր.

Նախահաշիւը բաժանուած էր 5 մասերի ըստ այսմ.

ա) Ուսումն. մաս, որի մէջ մտնում են բոլոր ուսուցչաց ռոճիկները . 14,900 ր.

բ) Վարչական մաս, որի մէջ մտել է կուսակրօն պաշտօնեաների թէ միաբանական ռոճիկը և թէ ուսումն. պաշտօնավարութեան համար եղած յաւելումը (տեսչի՝ 700, երկու ուսուցիչ վարդապետաց իւրաքանչիւրին 600, մի սարկաւագի 200—ընդամէնը 2100 ր.)։ Վերակացուների, Բժշկի, մատենադարանապետի, քարտուղարի, ծառաների ռոճիկը և դիւանական ծախք ընդամէնը 9040 ր.

գ) Ուսումն. պիտոյք. գիրք, դասարանական կարասիք ևլն . . 1200 ր.

դ) Տնտես. մաս. թէյ և շաքար, հանդերձեղէն, վառելիք, նորոգութիւն և կարկատան ևլն . . . . 12972 ր.

ե) Արտասահմանում և Ռուսաստանում բարձր. կրթութիւն ստացող նախկին սաների թոշակ . . . . 2900 ր.

Նախահաշուի մէջ որոշուած գումարով ուսանում էին Մուշեղ սարկաւագ (այժմ հանգուցեալ), իբրև որդեգիր Բար. Գ. Փրիդոնեանի.

Կոստանդին սարկաւագ (այժմ Իւրիեւում), իբրև որդեգիր Բարեյիշատակ Խուդաւեանի.

Տեարք Եղնիկ և Յուսիկ վարդապետներ (այժմ ուսուցիչ և օգն. տեսչի Ճեմարանում).

Այս հաշուից դուրս Բարեյիշ. Գ. Թումայեանի կտակած գումարի տոկոսով ուսանում էին՝ Սմբատ սարկաւագ (այժմ ուսանող Ս. Պետերբուրգի համալսարանի արեւել. բաժնի) և Պօղոս սարկաւագ՝ այժմ Խարկովում։ Այլ և Բարեյիշատակ Յ. Ադամեանի կտակից նպաստ ընդունելով ուսանում էր Կիեւում Բարեշնորհ Մամբրէ վարդապետ (այժմ տնտես և ուսուցիչ Ճեմարանում)։

---

## ՄՈՒՇԵՂ ՍԱՐԿԱՒԱԳ

Մարտի 8-ին, հինգշաբթի երեկոյեան 5 ժամին իւր մահկանացուն կնքեց Մայր Աթոռիս միաբան Մուշեղ Սարկաւագ Տէր Գաբրիէլեանց։ Հանգուցեալը ծնուել է Շուշի քաղաքում 1874 թ։ Հօր կենդանութեան օրով նա կրթուում էր նոյն քաղաքի Ռէալական դպրոցում։ Մահուանից 2 տարի յետոյ թողնում է Ռէալական դպրոցը և պատրաստւում է Ճեմարան մտնել։ Տ. Մակար կաթուղիկոսի օրով 1889 թ. ընդունուում է Մայր Աթոռիս ժառանգաւորաց Գէորգեան Ճեմարանի դ. դասարանը և յաջող աւարտելով դպրոցական բաժինը՝ 1893 թ.